

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԹԻՒՄԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Թեմական տեսուչների թօնիկը: Պետական Դուման սոյն տարուայ դարձանային ժողովներից մէկում ընդունել է թեմական և գաւառական տեսուչների ռոճիկների յաւելման նախագիծը: Մինչև այդ նախագծի հաստատութիւնը՝ թեմական տեսուչները ստանում էին տարեկան 1500 ռ., իսկ գաւառականը 400—900 ռ., որ ի հարկէ խիստ անբաւարար են, մանաւանդ երբ ի նկատի ունենանք՝ որ այդպիսի կարեւոր և պատասխանատու պաշտօնների համար անհրաժեշտ են բարձր ցենզով և փորձուած տեսուչներ: Ներկայումս Սեմինարիայի ուսուցիչները ստանում են 2000—3000 ռ. ուրեմն այդպիսի դէպքում ո՞վ կըթողնի Սեմինարիայի ուսուցչութեան պաշտօնը և 1500 ռուբ. թեմական տեսչի պաշտօնը ստանձնի: Նոր օրէնքով թեմական տեսուչների ռոճիկը դարձրել են մինչև 4000 ռ., որ ըստամենայնի բաւական է, իսկ գաւառական տեսուչներինը (միզնում կոչւում են շրջանային) մինչև 2000 ռ., աւելացրած նաև ճանապարհածախը 400 ռ., որ նոյնպէս շատ բաւարար է: Այսպիսով շնորհիւ նշանակուած բաւարար ռոճիկների հետզհետէ թեմերում կըլինին աւելի հմուտ և փորձուած տեսուչներ, առանց որոնց դպրոցական գործը միշտ կարող է տուժել:

Առհասարակ Սրբ. Մինօղը և Պետական Դուման առանձին ուշադրութիւն են դարձրել ծխական դպրոցների, շրջանային և թեմական տեսուչների, նաև Սեմինարիայի ուսուցիչների ապահովութեան վրայ՝ բաւարար ռոճիկներ նշանակելով այդ հաստատութիւններում ծառայող ուսուցիչներին, իսկ ընդհակառակը միանգամայն անուշադիր են գտնուել դէպի Հոգևոր Ճեմարանի պրօֆեսսորները, որոնց ռոճիկները անհամեմատ անբաւարար են: Մինչ Հոգևոր Սեմինարիաների ուսուցիչները ստանում են 2 մինչև 4 հազար ռուբլի, և կենսաթոշակ 1800 ռ. քսան և հինգ տարուայ ծառայութեան համար, Հոգևոր Ճեմարանի պրօֆեսսորներին ռոճիկները մնում են անփոփոխ 1140—2100—3600 ռ., իսկ կենսաթոշակ 25 տարուայ ծառայութեան համար 900—1600—2400 ռ.: Պետական Դուման նոյն իսկ ուշադրութիւն է դարձրել համալսարանների պրօֆեսսորներին ռոճիկների բարելավման վրայ, իսկ Ճե-

մարանների համար ոչ մի կարգադրութիւն: Կարծես թէ զորանով ցոյց է տրւում մի առանձին անտարբերութիւն և արհամարհանք դէպի գիտութիւնը, դէպի Հոգևոր ձեմարանների յառաջադիմութեան գործը:

Ռեալաց վանքերի գործունեութիւնը յօգուտ վիրաւոր զինուորացիների: Պետերբուրգի հարուստ Ալէքսանդր-Նեվսկի վանքը հիւանդ և վիրաւոր զինուորացիների համար պատրաստել է հիւանդանոց 100 հոգու համար, իսկ Կանանց Յովհաննու վանքը՝ 50 հոգու համար:

Մոսկուայի վանքերն որոշել են իւրաքանչիւր ամիս վճարել 12,000 ռուբլի հիւանդ և վիրաւոր զինուորացիների հիւանդանոցների օգտին: Ս. Երրորդութեան Սերգիևի վանքը պահպանում է հիւանդանոց 200 զինուորացիների համար: Մի քանի վանքերին կից եղած շինութիւնները յատկացուած են հիւանդանոցներ քայ անկու համար, ինչպէս Նիկոլո-Ուլրէշսկի վանքում 300 մահճակալի համար, Մոսկուայի Զնամէնսկի վանքում 150 մահճակալ Պօկրովսկի, Դանիլովսկի և Նիկոլսկի վանքերում 100-ական, այսպէս և այլ վանքերում 50-ական և 25-ական՝ Կանանց վանքերը մեծ թուով կոյսեր է ուղարկում հիւանդանոցներում ծառայելու որպէս գլխավոր թեման քոյրեր: Զանազան վանքերից վանականներ են գնացել կառուող զօրքերի մէջ քահանայադոժելու և ծառայելու որպէս գլխավոր թեման եղբայրներ:

Հոգևոր դպրոցների ուսուցիչները որոշել են իրենց հաշուով պահել 100 մահճակալ հիւանդ և վիրաւոր զինուորացիների համար հոգևոր դպրոցներին կից: Պահպանութեան ծախքի ֆօնդը պէտք է կազմուի իւրաքանչիւր ուսուցչի ոտակից հանելով յօգուտ ֆօնդի 2 մինչև 40/0: Այդ յանձնաժողովի նախագահ է կարգուած Պետրոգրադի Հոգևոր ձեմարանի վերատեսուչը: Հիւանդանոցի առողջապահական մասի կառավարութիւնը յանձնուած է Հոգևոր ձեմարանի ուսանողներին:

Կանանց գեր պաշտօնավի ժամանակ: Մինչև ուսու քաջամարտիկ զօրքերը անձնուէր կերպով կուում են պատերազմի դաշտում թշնամու դէմ, համարեա ամբողջ Ռուսաստանում եռում է կեանքը Կանանց շրջանում: Առանց ազգի խտրութեան ամեն քաղաքում, գիւղաքաղաքում և աւաններում կանայք կազմակերպել են իրենց եղբայրներին օգնելու սուրբ գործը: Նոքա իրենց վրայ են առել վիրաւոր զինուորացիներին հիւանդանոցներում խնամելու գեղեցիկ գործը, նոքա գիշեր ցերեկ աշխատում են պատրաստել պատե-

բազմի դաշտում գտնուած և կամ վերադարձած վիրաւոր զինուոր-
 ների համար սպիտակեղէններ, տաք հագուստներ և այլ կարեւոր
 պիտոյքներ: Զանազան պարահանդէսների շտապներում այժմ
 կարելու և հիւսելու մեքենաները դրած՝ բարձրատիճան, մեծա-
 տան և ազդատ ու միջակ դասակարգի կանայք և օրորդները
 միացած միասին աշխատում և պատրաստում են սպիտակեղէններ:
 Բոլորն էլ համակուած են մի ընդհանուր բարձր զգայունքով,
 որ բոլէն լուրջ է և պէտք է օգնել ընդհանուր գործին, որ կրկիրը
 ազատուի աւերիչ թշնամու անպատակութիւններից ու աւերում-
 ներից: Վանքերի հաղարաւոր կոյսեր, որ խաղաղ ժամանակ գուցէ
 չէր երևում նոցա դերը յօգուտ ժողովրդի, այժմ անձնուէր կեր-
 պով աշխատում են հիւանդանոցներում և այլ աշխատանքի անե-
 րում, կատարելով իրենց ճիշտ բարոյական ծառայութիւնն ըստ
 իրենց կոչման:

Ռուս ժողովրդի ամենալեւծ յայրուրիւնը: Եւրոպական մեծ
 պատերազմը սկսելու օրից ռուս ժողովուրդը տարիլ է ամենամեծ
 յաղթութիւնը, յաղթութիւն ժողովրդի բարոյականը, ֆիզիքականն
 և նիւթականը քայքայող ալգոհոլի ամենաքիւտասակար թշնամու
 դէմ: Դեռ պատերազմը չվերջացած, արդէն ռուս ժողովուրդը ու-
 նեցել է այդ պատերազմից ամենամեծ օգուտը, որ կարողացել է
 ազատուել ալգոհոլի քիւտասակար աղղեցութիւնից: Դարերով այդ
 սարսափելի թշնամին հիւժել և մաշել է ժողովրդի մարմինն ու
 հոգին, աւելի քան ախտաւոր հիւանդութիւնը և կամ արտաքին
 թշնամիներից կրած հարուածը: Արտաքին թշնամին որոշ ժամա-
 նակ եկել հարուածել է ու անցել, իսկ այդ ներքին քայքայիչ
 թշնամին դարերով ընդմիշտ տանջել է ժողովրդին, մեռցնելով
 նորա մէջ առողջ հոգին, աստուածային փ վերուստ զրուած շնորհ-
 ները, ընտանեկան և հասարակական խաղաղութիւնը, կենսունա-
 կութիւնը և թանկագին առողջութիւնը: Ոչ մի թշնամու հարուած
 այնքան ուժեղ չէ եղել՝ որչափ ներքին թշնամու—ալգոհոլի—գի-
 նու և օղու և այլ թունդ խմիչքների պատճառած քիւտաները:

Այժմ երբ ներքին Գործերի նախարարի միջոցով կառավա-
 րութիւնը կարգադրել է ամեն տեղ փակել խմիչքների խանութ-
 ները, ամեն տեղ արգելել ալգոհոլի վաճառումն, ժողովուրդը մեծ
 ուրախութեամբ ընդունել է այդ կարգադրութիւնը, որ պատմա-
 կան նշանակութիւն ունի, և ցանկութիւն յայտնել, որ ոչ թէ
 միայն պատերազմի ընթացքում արգելուի ալգոհոլի վաճառումն,
 այլ և ընդմիշտ վերացնել ժողովրդի մէջ թունդ խմիչքների վա-

ճառու մնա և տարածու մնա: Երկար չանցաւ՝ Ռուսաստանի դանազան կողմերից արտայայտուած այդ բարի ցանկութիւնը արժանացաւ Նորին Կայսերական Մեծութեան բարձր ուշադրութեան և Կայսեր ըարենհանց հրամայել ընդմիշտ արգելել Կայսրութեան բոլոր երկրներում ալգոնոլի վաճառումն յուրախութիւն և ի բախտաւորութիւն Ռուսաստանի ժողովրդոց: Այս վերին աստիճանի ուրախալի կարգադրութիւնը կը մնայ իբրեւ պատմական մեծ ակտ և ներկայ ու ապագայ սերունդն առանձին երախտադիտութեամբ կը յիշատակի միշտ Ներին Կայսերական Մեծութեան այս փառաւոր օգտակար կարգադրութիւնը:

Ռուսաց պրափօսլա եկեղեցու յաջողութիւնը ճապոնիայում 1914 թ. հաշուի համաձայն: Ճապոնիայում պրափօսլա եկեղեցու գիրկն են անցել 488 երեխայ, 484 հասակաւոր, ընդամենայն 972 հոգի: Անցեալ տարի վախճանուել են 300 հոգի, քահանայ է ընտրուած մի հոգի, հոգևոր ծառայութեան մէջ են ընդունուած 7 հոգի, որոնք աւարտել են Միսսիսկի Սեմինարիան: Ներկայումս Ճապոնիայում կան 34 սրբազնագործ պաշտօնեայ, 7 սարկաւազ, 104 սաղմոսասաց, սրանց օգնականներ 12, իսկ քարոզչական ասպարիղում ճապոնացիներէր կան 161 հոգի, որոնք տարածում են ուստադաւանութիւնը: Հետեւեալ տարին պէտք է Հոկադատում հիմնեն Ռուսաց մեծ եկեղեցի, փոխարէն այն եկեղեցու որ այրուեց 1907 թ. և որը շինուած էր իբրեւ առաջին պրափօսլա եկեղեցին Ճապոնիայում: Այդ նոր եկեղեցու շինութեան համար յատկացրել են մինչև 21,000 էն (ճապոնական դրամ):

Տրապիզոնի պրափօսլա եկեղեցիներ: Տրապիզոնում կան 9 պրափօսլա ծուխ 13,860 յոյն բնակչութեամբ, 11 եկեղեցի, 17 աղօթատուն, 12 քահանայ, կայ գիմնազիա, ծխական դպրոց, և կանանց ինստիտուտ: Ամբողջ Տրապիզոնի միտրապօլիտութեան մէջ կան 50,474 պրափօսլա յոյն բնակիչ, 92 եկեղեցի, 235 աղօթատուն, 96 քահանայ, զանազան տիպի գալորոցներ 75, ուսուցիչ և ուսուցչուհի 174, սովորողներ 6534: Տրապիզոնի թեմը բաժանուած է 9 շրջանի: